



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
«ՀԻԴՐՈՕԴԵՐԵՎՈՒԹԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ
ՏՆՕՐԵՆ

« 21 » 12 2020թ.

№ 08/ԼԱ/ - 547

Դեկտեմբերի 14-20-ը դիտված հիդրոոդերևութաբանական
պայմանները ՀՀ-ում

Դեկտեմբերի 14-15-ին, 20-ին առանձին շրջաններում, 16-18-ին՝ շրջանների զգալի մասում դիտվել են տեղումներ: Տեղումների գումարային առավելագույն քանակը կազմել է Գորիսում՝ 38մմ, Սիսիանում՝ 24մմ, Արտաշատում՝ 22,8մմ, Որոտանում և Արագածում՝ 22մմ, Կապանում՝ 21,9մմ, Աշտարակում՝ 21,3մմ, Ուրցաձորում՝ 20մմ, մնացած շրջաններում՝ 2-15մմ քանակությամբ: Դեկտեմբերի 19-ին դիտվել է առանց տեղումների եղանակ:

Օդի օրական միջին ջերմաստիճանը դեկտեմբերի 14-17-ին բարձր է եղել նորմայից՝ 3-7, 18-ին՝ 2-4 (Գեղարքունիքում, Լոռիում և Տավուշում՝ նորմայի սահմաններում), 19-ին՝ Արարատյան դաշտում՝ 1-2 աստիճանով, 20-ին եղել է նորմայի սահմաններում (Շիրակում՝ բարձր 2-4 աստիճանով):

Ամենաբարձր ջերմաստիճանը դիտվել է դեկտեմբերի 15-ին: Սյունիքում գրանցվել է +11...+16°C, Արարատյան դաշտում, Վայոց Ձորի, Կոտայքի և Արագածոտնի նախալեռներում, Տավուշում, Լոռիում +7...+12°C Գեղարքունիքում, Շիրակում, Կոտայքի, Արագածոտնի և Վայոց Ձորի լեռներում՝ +4...+9°C (Ամասիայում, Աշոցքում՝ +2°C):

Ամենացածր ջերմաստիճանը դիտվել է դեկտեմբերի 19-ին: Արագածոտնի, Վայոց Ձորի և Կոտայքի լեռներում՝ -8...-13°C, Շիրակում, Գեղարքունիքում, Լոռիում, Սյունիքի նախալեռներում՝ -5...-10°C, (Մասրիկում՝ -18°C, Սիսիանում՝ -17°C, Աշոցքում՝ -16°C, Տաշիրում՝ -14°C, Գավառում՝ -13°C), Տավուշում, Կոտայքի, Արագածոտնի և Վայոց Ձորի նախալեռներում, Արարատյան դաշտում, Սյունիքի հովիտներում՝ -1...-6°C (Մեղրիում՝ 0°C):

Դեկտեմբերի 14-15-ին Պուշկինի լճում դիտվել է քամի 15-17մ/վ, պոռթկումներում՝ 22մ/վ արագությամբ:

Դեկտեմբերի 20-ի դրությամբ ձյան ծածկը կազմում է Արագած բլ.-ում 57սմ, Ամբերդում՝ 21սմ, Մասրիկում՝ 16սմ, Անանուն լճում՝ 13սմ, մնացած շրջաններում՝ 2-10սմ քանակությամբ:

Շաբաթվա ընթացքում հանրապետության գետերում բնական էական փոփոխություններ չեն դիտվել:

Սևանա լճի մակարդակը շաբաթվա ընթացքում մնացել է անփոփոխ և կազմել՝ 1900.52մ (20.12.20թ.), որն անցյալ տարվա նույն օրվա մակարդակից բարձր է 8 սմ-ով:

Հարգանքով՝

Տնօրենի ժ/պ

Լ. Ազիզյան